ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԸ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ
Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն
էլփոստ՝ viktorkatvalyan@mail.ru

Հայերենի բարբառներում հոգնակի գոյականի ձևավորումը բարբառագիտության մեջ ընդհանուր մեկնաբանություն չի ստացել: Թվի կարգը բարբառներում ունի տարբեր դրսևորումներ, որոնց համապարփակ դիտարկումը կարևոր է ոչ միայն բարբառագիտության, այլև ընդհանրապես հայոց լեզվի ուսումնասիրության համար: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել բարբառային հայերենի հոգնակերտ մասնիկները, բացահայտել դրանց կազմության և տարածական բաշխման առանձնահատկությունները: Իրողությունը դիտվել է հայոց լեզվի մոտ քառասուն բարբառներում, փվյալները վերցված են ինչպես մենագրություններից, այնպես էլ բարբառագետների հավաքած ձեռագիր նյութերից: Բարբառային հոգնակերտ մասնիկները կազմությամբ պարզ կամ բաղադրյալ են: Բաղադրյալ հոգնակերտները հիմնականում երկբաղադրիչ են, ավելի հաճախ դրանք բաղկացած են ք, եր, վի, տի, ան, նի մասնիկներից: Գրեթե բոլոր բարբառներում կան եր, ներ հոգնակերտները, ք, նի մասնիկները նույնպես տարածված են: Ըստ հոգնակի մասնիկների գործածության՝ նմանություններ և տարբերություններ կարելի է տեսնելոչ միայն առանձին բարբառների, այլև բարբառների խմբերի միջև: Մասնավորապես, կան արևմտյան բարբառներին բնորոշ մասնիկներ, արևելյան բարբառներին բնորոշ մասնիկներ և բարբառների երկու խմբերում գրեթե հավասար բաշխվածություն ունեցող մասնիկներ:

Բանալի բառեր՝ *հոգնակի թիվ, մասնիկ, պարզ, բաղադրյալ, բարբառ, հայերեն, գրաբար, միջին հայերեն:*

Թվի քերականական կարգը բարբառային հայերենում հիմնականում արտահայտվում է թվային իմաստների *եզակի – հոգնակի* հակադրությամբ: Որոշ բարբառներում իր արտահայտությունն ունի նաև երկակի թվի իմաս-

տը[1]: Բարբառները գոյականի թվի կարգի արտահայտությանն առնչվող շատ իրողություններ ժառանգել են լեզվի զարգացման նախորդ փուլերից, և ինչպես նկատել է Հ. Աճառյանը՝ «Թե՛ գրաբարի և թե՛ միջին հայերենի բոլոր հոգնակերտ մասնիկները պահված են բարբառներում, ոմանք, իբրև կանոնավոր, ընդհանուր գործածությամբ, ոմանք էլ՝ բացառիկ դեպքերում»[2]: Միջին հայերենում գործածված հոգնակերտները քննելիս դրանց արտահայտությունները բարբառներում դիտարկել է Յ. Կարստը[3]: Ընդհանրապես, Կարստը միջին հայերենի (կամ՝ կիլիկյան հայերենի) հոգնակիի կազմության ձևերը բաժանում է երկու խմբի՝ ա) հոգնակիի հատուկ կիլիկյան ձևեր՝ *եր, նի, վի, տի, վտի, ան, ստան* վերջավորություններով, բ) *ք* վերջավորությամբ ձևեր[4]: Այնուհետև ներկայացնում է մասնիկների գործածության ոլորտները և անդրադարձ կատարում այդ ձևերի պատմությանը՝ ներկայացնելով ծագումը (*վի* մասնիկի ծագումը կապվում է երկու թվականի *ու*-ի հետ, իսկ *ստան*-ը հանգեցվում է տեղի իմաստ ունեցող ածանցին) կամ հինհայերենյան ձևերից անցումը միջինհայերենյաններին (եար>եր, անի>նի, տի>տի, եան>ան, ք>ք)[5], նաև նոր հոգնակերտների ձևավորումը (վտի>վի+ոտի, իք>ի+ք, այք>այ+ք[6], անք>ան+ք, ունք>ուն+ք և այլն): Ի դեպ, Կարստը նկատել է հետաքրքրական մի օրինաչափություն. ըստ նրա՝ նոր հայերենի հենց այն բարբառները, որոնք ավելի հաճախ ունեն *իք, ուք, աք* ընդարձակ հոգնակիներ, մեծ չափով պահպանել են պարզ *ք* հոգնակին ձայնավորահանգ գոյականների մոտ[7]: Բարբառային լեզվում ոչ միայն միջինհայերենյան այդ մասնիկները ենթարկվել են զանազան հնչյունական փոփոխությունների, այլ նաև երևան են եկել թվի կարգի արտահայտության նոր միջոցներ: «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ Հ. Աճառյանը մեկ տասնյակից ավելի բարբառներում առանձին-առանձին դիտարկել է հոգնակերտ մասնիկների գործածությունը և հոգնակի թվի դրսևորման յուրահատ-

---

[1] Ինչպես նկատել է Մ.Աբեղյանը, հնդեվրոպական նախալեզվում թիվը եղել է երեք՝ եզակի, հոգնակի և երկակի (տե՛ս Մ.Աբեղյան, Երկեր, Զ հատոր, 1974, էջ 271):

[2] Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1957, էջ 713: Այսուհետ՝ ԼՔՀԼ:

[3] Տե՛ս Յ.Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, ԵՊՀ հրատ., 2002 , էջ 166-201:

[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 166 էջ:

[5] Տե՛ս նշվ. աշխ., էջ 166-194:

[6] Կարստը համարել է, որ նոր հայերենում ք վերջավորությունը ձգտում ունի դեպի ձայնավորական կապակցությունները (տե՛ս նշվ. աշխ., էջ 199):

[7] Տե՛ս նշվ. աշխ., էջ 196 (տողատակ):

կությունները ըստ հիմքերի վանկերի քանակի, հնչյունակազմության, բառակազմական ու պատմական իրողությունների, նկարագրել է հոգնակիի կազմությամբ պայմանավորված հնչյունափոխությունները, ներկայացրել է նաև շեղումներն ու բացառությունները[1]: Իհարկե, հարցին հայագետն անդրադարձել է առանձին բարբառների նկարագրությանը նվիրված մենագրություններում ևս[2]: Հայերենի բարբառներում գործածվող հոգնակերտ մասնիկներին անդրադառնալով՝ Ա. Ղարիբյանը իբրև բարբառների ընդհանուր հոգնակերտ նշել է *եր* մասնիկը և առանձնացրել նաև *ներ* մասնիկը՝ իբրև համարյա բոլոր բարբառներում հանդիպող հոգնակերտ: Այլ հոգնակերտներ ներկայացնելիս նշել է դրանք ունեցող բարբառներ, որոշ դեպքերում անդրադարձել մասնիկների ծագմանն ու կազմությանը[3]: Ա. Գրիգորյանը նկատել է, որ բարբառները բավականաչափ հարուստ են հոգնակերտ մասնիկներով, ընդ որում՝ տարբեր բարբառներ գործածում են տարբեր մասնիկներ, և յուրաքանչյուր բարբառում հանդես եկող բոլոր հոգնակերտները միատեսակ գործածություն չունեն[4]: Բարբառագետը ևս արձանագրել է, որ «Բարբառներում ամենաշատ տարածված են *էր* և *նէր* հոգնակիակերտ մասնիկները. գրեթե բոլոր բարբառներն էլ դրանցով հոգնակիներ են կազմում»[5]: Ներկայացնելով տարբեր բարբառներում գործածվող մի շարք հոգնակերտ մասնիկներ՝ Ա.Գրիգորյանը եզրակացնում է, որ «արտաքուստ տարբեր թվացող շատ մասնիկներ նույն ծագումն ունեն և փաստորեն ոչ թե տարբեր մասնիկներ են, այլ միևնույն հոգնակիակերտ մասնիկը՝ հնչյունական որոշ փոփոխության ենթարկված»[6]: Լեզվաբանը հավելում է նաև, որ բարբառներում սովորաբար փոխառյալ հոգնակերտ մասնիկներ չեն գործածվում[7]: Առանձին բարբառային միավորներ հետազոտելիս լեզվաբանները սովորաբար հոգնակիի կազմությունը ներկայացրել են՝ հաշվի առնելով բառերի

---

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 713-817:

[2] Տե՛ս Հ.Աճառյանի հետևյալ աշխատությունները՝ Քննություն Վանի բարբառի, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1952, էջ 108-115. Քննություն Առտիալի բարբառի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1953, էջ 129-135. Քննություն Համշենի բարբառի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1947, էջ 79-89, Քննութիւն Մարաղայի բարբառի, Ե., 1926, էջ 150-160. Քննություն պոլսահայ բարբառի, ԵՊՀ հրատ, Ե., 1941, էջ 90-93. Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի, Ե., 1940, էջ 169-178 և այլն:

[3] Տե՛ս Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 137-139:

[4] Տե՛ս Ա.Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևանի համալսարանի հրատ., 1957, էջ 99:

[5] Նշվ. աշխ., էջ 100:

[6] Նշվ. աշխ., էջ 100-101:

[7] Տե՛ս նշվ. աշխ., էջ 101:

վանկերի քանակը, հնչյունական կազմությունը, բառակազմական իրողությունները, պատմական հանգամանքները, հնչյունափոխական երևույթները և այլն[1]: Գ. Ջահուկյանը բազմահատկանիշ դասակարգման համար իր ընտրած զուգաբանություններում ընդգրկել է հոգնակիի կազմությանն առնչվող վեց հատկանիշ[2], որոնք վերաբերում են մի շարք հոգնակերտների և դրանցով կազմված բաղադրյալ մասնիկների, մեկական հատկանիշներ առնչվում են հոգնակի հոլովմանը և բազմավանկ բառերի հոգնակիի կազմությանը: Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում գոյականի հոգնակի թվին առնչվող քերականական ինը զուգաբանությունները ներկայացնում են հոգնակիի ձևավորման կապը վանկաքանակի, հիմքի հնչյունական կազմության, բառակազմական երևույթների հետ, կարևորվում են նաև *-վի*-ով կամ նրանով բաղադրված հոգնակիի առկայությունը, ազգակցական հարաբերություն ցույց տվող մի խումբ բառերի հոգնակիի կազմությունը[3]: Ընդհանուր առմամբ՝ ճիշտ է, գոյականի հոգնակիակազմության դրսևորումները բարբառային առանձին միավորներում այս կամ այն խորությամբ հետազոտված ու նկարագրված են, սակայն կարելի է ասել՝ հոգնակիի կազմությունը բարբառային հայերենում ընդհանրական մեկնաբանություն չի ստացել: Բնականաբար, այդ իրողությունը բարբառներում ունի բազմազան դրսևորումներ, որոնց ամբողջական ու համակողմանի դիտարկումը կարևոր է ոչ միայն բարբառագիտության համար, այլ նաև հայոց լեզվի թե՛ համաժամանակյա, թե՛ տարաժամանակյա ուսումնասիրությունների առումով: Այս աշխատանքը անդրադարձ է բարբառային հայերենում գործածվող հոգնակերտ մասնիկներին, հիմնականում՝ դրանց կազմությանը և տարածական ընդգրկմանը: Հասկանալի է, որ հայերենի բարբառները հավասար խորությամբ չեն ուսումնասիրված և նկարագրված, բարբառային շատ միավորներ դեռևս հետազոտված չեն, այնուամենայնիվ հրապարակված աշխատությունները, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբա-

---

[1] Տե՛ս Է.Աղայան, Մեղրու բարբառը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1954, էջ 111-121. Դ.Կոստանդյան, Երզնկայի բարբառը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979 , էջ 59-62. Ա.Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1978, էջ 64-66. Մ.Ասատրյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, ԵՊՀ հրատ., 1962, էջ 63-74. Մ.Մուրադյան, Շատախի բարբառը, ԵՊՀ հրատ., Ե., 1962, էջ 85-88. Ա.Պողոսյան, Հադրութի բարբառը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1965, էջ 82-89. Ք.Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 70-72:

[2] Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1972, էջ 82, 85:

[3] Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, խմբ. Հ. Մուրադյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977, էջ 76-79:

ռագիտության բաժնի աշխատակիցների՝ տարիների ընթացքում համապատասխան ծրագրով հավաքած մեծածավալ նյութը հնարավորություն են տալիս ընդհանուր առմամբ ամբողջականորեն ներկայացնելու և մեկնաբանելու հոգնակի թվի արտահայտության հետ կապված հիշյալ իրողությունները:

Հոգնակերտ մասնիկների կազմության մասին

Բարբառային հայերենում հոգնակերտ մասնիկները կազմությամբ լինում են պարզ և բաղադրյալ, ընդ որում՝ բարբառից բարբառ հաճախ հանդես են գալիս հնչյունական տարբերակներով, որը պայմանավորված է բարբառներում գործող հնչյունական օրինաչափությունների տարբերություններով[1]: Պարզ հոգնակերտ մասնիկներից են[2]՝

էր (Պլ., Սուչ., Ն.Ջ., ՆՆխ., Մղր., Խ., Երզ., Հդր., Ղրբ., Խրբ., Կր., Ասլ., Եվդ., Սս.), **եր** (Բյզտ., Վն., Մշ.), **իր** (Տիգր., Հմշ., Մրդ., Սվդ., Քս.), **ար**//***ար*** (Մղր., Ագլ., Կրճ.), **իյ** (Զթ..), **եյ** (Հջ.).

ք (Ար., Ն.Ջ., ՆՆխ., Բյզտ., Պլ., Խրբ., Երզ., Մշ., Կրճ., Քս., Շ.Կ., Զթ., Հջ., Կր., Եվդ.), **քյ** (Ագլ., Վն., Շտխ., Մղր., Կրճ., Հդր.), **կ** (Սս., Հմշ., Բուլ., Ալշ., Կր.).

նի (Ղզխ., Տիգր., Հմշ., Լ., Հջ.), **նէ** (Ղրբ., Մղր., Հդր.), **նա** (Զթ., Սվդ., Կրճ., Քս.), **նը** (Զթ.), **նին** (Սս.).

իկ (Կր., Ալշ), իգ (Տիգր.), **էքյ** (Մղր.), **իք** (Երզ., Մշ., Շ.Կ., Հջ., Ասլ.), **էգ** (Քս.). **ըք** (Զթ.).

ան (Լ., Ալշ.,Ախլց., Խրբ., Կր.), **օն** (Հմշ.).

վի (Ախլց., Հմշ., Մշ., Խրբ.), **վա** (Սվդ., Քս.).

ստան (Արդ., Կր., Մշ., Խրբ./, **սդուն** (Սվդ.), **ստուն** (Քս.)[3].

դա /տի/ (Սվդ.), **տա** (Քս.) :

Պարզ հոգնակերտներ են նաև՝ **աք** (Սվդ.), **էք** (Մշ., Հմշ.), **անի** (Ն.Ջ.), **ինա//ընա** /ենի/ (Քս.), **օնք** /ունք/ (Քս.), **օտ** (Հդր.) և այլն:

Ավելի շատ են բաղադրյալ հոգնակերտները: Անդրադառնալով նման կազմություններին՝ Հ. Աճառյանը նկատել է, որ գրաբարում կրկին հոգնակի կարելի է գտնել այն դեպքում, երբ հավաքական իմաստ ունեցող ձևը ստա-

---

[1] Այստեղ նպատակահարմար չենք համարում անդրադառնալ այդ օրինաչափություններին:

[2]Հոգնակերտ յուրաքանչյուր մասնիկ ներկայացվում է տարբերակներով, համապատասխան բարբառային միավորների նշումով:

[3] Հ.Աճառյանը նշել է, որ *ստան*-ը հին հայերենի *աստան* տեղական մասնիկն է, որ վերածվել է հոգնակերտի (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 713), իսկ Ա.Ղարիբյանի կարծիքով՝ այս մասնիկը բաղադրված է ս+տ+ան հոգնակիներից (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 138):

նում է հոգնակերտ մասնիկ՝ *մանկտիք, աւագանիք, իշանք, ծիանք*: Նա երևույթը բացատրել է հոգեբանական գործոնով, երբ հավաքականը ըմբռնվել է ձևով եզակի և ստացել է հոգնակիի նշան: Կրկին հոգնակիի երևույթը զարգացել է միջին հայերենում, իսկ բարբառներում շատ է շատացել[1]: Բաղադրյալ հոգնակերտների ձևավորումը բարբառներում գրեթե նույն կերպ են մեկնաբանել այլ լեզվաբաններ ևս: Այսպես, Ա. Գրիգորյանը գրել է. «.... բարբառներում շատ տարածված է այն երևույթը, երբ չի գիտակցվում այս կամ այն հոգնակիակերտ մասնիկի հոգնակիության իմաստը և մի մասնիկին ավելացվում է մեկ ուրիշը, իսկ երբեմն, նույնիսկ մի քանիսը և դրանով առաջ բերվում բաղադրյալ հոգնակիակերտ մասնիկներ»[2]:

Բարբառներում գործածվող բաղադրյալ հոգնակերտներից են՝

նէր /նի+եր/[3] (Պլ., ՆՆխ., Ն.Ջ., Խ., Երզ., Շ.Կ., Խրբ., Կր., Ասլ., Եվդ.), **ներ** (Մշ., Բյզտ.), **նիր** (Տիգր., Հմշ., Մրդ., Քս.), **նիյ** (Զթ..), **նեյ** (Հջ.).

անդա /ան+տի/ (Սվդ.), **էնտ*ա*** (Քս.).

անք /ան+ք/ (Ն.Ջ. Մշ.), ***ա*նք** (Ագլ.) , **անքʲ** (Վն., Շտխ).

էրք /եր+ք/ (Ար., Ն.Ջ., Հդր.), **արք** (Ագլ.), **երք** (Մշ.), **իրք** (Քս.).

դան /<դան<տան<տի+ան/ (Մշ.), **դուն** (Սվդ.), **տուն** (Քս.).

դանք /տի+անք/ (Պլ., Երզ., Մշ., Շ.Կ., Կր.), **տանք** (Մրդ., Բյզտ., Կր.).

դաք /տի+աք/ (Սուչ., Սվդ., Զթ.), **դ*ա*ք** (Խրբ., Հջ.).

վան /վի+ան/ (Մշ., Զթ.), **վուն** (Քս.),

վանք /վի+անք/ (Մրդ., Մշ.), **վանքʲ** (Շտխ.), **վօնք** (Հջ.).

վընէր /վի>վը+նէր/ (Պլ., Ախլց., Շ.Կ., Խրբ., Ասլ.), **վընիր** (Տիգր).

վընի /վի+նի/ (Հմշ., Խրբ., Հջ., Սս.) **վընա** (Քս.).

վըդա /վի+տի/ (Սվդ.), **վըտա** (Քս.).

վըդիք /վի+տի+ք/ (Պլ., Կր., Սուչ., Տիգր., Երզ., Մշ., Շ.Կ., Խրբ., Ասլ.), **վըդիկ** (Կր.), **վըտաք** (Քս.).

վըդաք /վի+տի+աք/ (Սվդ., Զթ.), **վիդ*ա*ք** (Հջ.).

վըդանք /վի+տի+անք/ (Պլ., Երզ., Մշ.), **վըդ*ա*նք** (Տիգր.), **վըդանկ** (Կր.), **վըտանք** (Եվդ.)

---

[1] Տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 828-829:

[2] Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 99:

[3] Այս մասնիկի միջինհայերենյան զուգահեռը համարվել է պարզ հոգնակերտ (տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Ե., 1975, էջ 36-39, այսուհետ՝ ԱՄԳՀՊ), Հ.Աճառյանը ընդունելի է համարել Յ.Կարստի կարծիքը, որ *–ներ* մասնիկը կազմված է հին *նի* + *եր* մասնիկների գումարից (տե՛ս ԼՔՀԼ, հ. 3, էջ 820): Այս հոգնակերտը բաղադրյալ է համարել նաև Ա.Ղարիբյանը (տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 137):

վիք /վի+ք/ (Հջ.), **վաք** (Սվդ.),

տիք /տի+ք/ (Կր., Բյզտ.), **դիք** (Պլ., Կր., Տիգ., Երզ., Մշ. Շ.Կ., Ասլ.), **դիկ** (Ալշ., Կր., Սս.), **տաք** (Քս.).

ռանք /էր+անք/ (Մրղ., Մշ.), **ռանքյ** (Վն., Շտխ.). **ռանկ** (Կր.).

օտիքյ /օտի+ք/ (Ագլ.), **օտէքյ** (Հդր.):

Այդ կարգի հոգնակերտներ են նաև՝ **անիք** /անի+ք/ (Ն.Ջ., Ագլ.), **աննի** /ան+նի/ (Հջ.). **անէր** /ան+էր/, (Կր.), **արէնք** /ար+էն+ք/ (Ն.Ջ.), **արիքյ** /ար+իք/ (Ագլ.), **արունք** /ար+ունք/ (Ն.Ջ.), **դունք** /տի+ունք/ (Երզ.), **ընիր** /ան+նի+եր/ (Քս.), **իրտանք** /էր+տի+անք/ (Մրղ.), **նաք** /նի>նա+ք/ (Սվդ.), **ստանկ** /ստան+ք/ (Սս.), **ստար** /ս+տի+ար/ (Շտխ.), **վըդան** /վի+տի+ան/ (Մշ.), **տեր** /տի+եր/ (Շտխ.), **ռան** /եր+ան/ (Մշ.), **ռունք** /եր+ունք/ (Մշ., Շ.Կ.), **քյէր** /քյ+էր/ (Խ. Լ., Շտխ.), **քյտեր** /ք+տի+եր/ (Շտխ.), **իկնի** /իկ+նի/ (Եվդ.), **իկեր** /իկ+եր/ (Ար.) և այլն:

Նկատելի է, որ բաղադրյալ հոգնակերտներն առավելաբար երկբաղադրիչ են: Դրանք ավելի շատ կազմվում են *ք, էր, վի*, այնուհետև՝ *տի, ան, նի* մասնիկներով[1]: Ընդ որում, եթե *վի* մասնիկը բաղադրյալ հոգնակերտի կազմում միշտ առաջին բաղադրիչ է, *ք* հոգնակերտը որպես կանոն երկրորդ բաղադրիչ է, ապա մյուս մասնիկները ավելի շատ առաջին բաղադրիչ են, քան երկրորդ: Մի շարք մասնիկներ (*օտի, անի, ստան, աք*՝ իբրև առաջին բաղադրիչ, *աք, էնք, էք*՝ իբրև երկրորդ բաղադրիչ) բաղադրյալ հոգնակերտների կազմում հանդիպում են մեկական անգամ: Իբրև երկրորդ բաղադրիչ հանդես են գալիս նաև *անք, նէր, տէր, տանք, տիք* բաղադրյալ կազմությունները:

Ի դեպ, բարբառներում արձանագրված հոգնակերտ շատ մասնիկներ միջին հայերենում չեն դիտվել: Դրանցից են՝ *օտ, անտի, դան, դանք, դաք, վըդիք, վըդաք, օտիք, աննի, անէր, արիք, արունք, դունք, ընիր, իրտանք, ստանք, տէր, ռան, քէր, քտէր, իկնի*: Սակայն այդ չի նշանակում, որ այդպիսի հոգնակերտները չեն կարող գործածված լինել դեռևս միջինհայերենյան շրջանում, այդ շրջանի բարբառային լեզվում:

[1] Գրեթե նույն պատկերն է միջին հայերենում (տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Բ, էջ 38):

Հոգնակերտ մասնիկների տարածվածության մասին

Հոգնակերտ մասնիկները զգալիորեն տարբեր են ըստ տարածվածության: Ինչպես և նկատվել է, գրեթե բոլոր բարբառներն ունեն *եր, ներ* հոգնակերտներ, համեմատաբար մեծ տարածում ունեն նաև *ք, նի* մասնիկները[1]: Մյուս հոգնակերտները դիտվել են առավել կամ պակաս ընդարձակ տարածքների բարբառային միավորներում, բարբառների խմբերում, առանձին բարբառներում: Ակնհայտ է, որ բոլոր բարբառային միավորներն էլ ունեն բաղադրյալ հոգնակերտներ, և այդպիսիք դրսևորվում են տարբեր զուգորդումներով ու հնչյունական ձևավորումներով: Այդ կարգի հոգնակերտները, ինչպես նկատել է Դ. Կոստանդյանը, «գրաբարի համեմատ լինելով նորություն, ընդհանուր են գրեթե բոլոր բարբառների և միջին հայերենի համակարգերի համար»[2]: Այդ են վկայում նաև Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակները, համաձայն որոնց՝ օրինակ, *վի և նրանով բաղադրված հոգնակերտներ (վի, վնի, վներ, վան, վանք, վդիք)* հատկանիշն ունի տարածվածության 74 միավոր ցուցիչ, *ր, եր, ար + ք տիպի բաղադրյալ հոգնակերտ* հատկանիշը՝ 63 միավոր ցուցիչ և այլն[3]: Մյուս կողմից՝ առանձին բաղադրյալ հոգնակերտներ կարող են ունենալ բավականին սահմանափակ տարածում: Օրինակ, *ք+եր հոգնակերտ* զուգաբանությունը արձանագրվել է Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում, Արարատյան բարբառի մեկ-երկու խոսվածքում[4]: Վիճակագրական տվյալները թույլ են տալիս դիտարկել հոգնակերտների բաշխումը ըստ հայերենի բարբառների արևմտահայ և արևելահայ խմբակցությունների, նաև ըստ առանձին տարածաշրջանների: Այսպես, Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակները վկայում են, որ վի մասնիկը և դրանով բաղադրված հոգնակերտները գերազանցապես գործածական են արևմտյան խմբակցության բարբառներում: Այստեղ դրանց տարածվածության ցուցանիշը կազմում է 69 միավոր, և արևմտահայ 72 բարբառախոս վայրերից այդ հատկանիշը չունեն ընդամենը 3-ը՝ Սիվրիհիսարը, Բեյլանը և Վարդենիսը[5]: Արևելյան խմբակցության բարբառներում այդ հատկանիշն ունի տարածվածության 5 միավոր

---

[1] Այս հոգնակերտները գրաբարում վկայված *ք, եար, նեար, անի* մասնիկների հետագա զարգացումն են ներկայացնում, որ արդեն միջին հայերենում ունեին *ք, եր, ներ, նի* ձևերը:

[2] Դ.Կոստանդյան, Երզնկայի բարբառը, էջ 60:

[3] Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 82, 99:

[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 82, 88-99:

[5] Տե՛ս նշվ. աշխ., էջ 88-95:

ցուցիչ՝ վերագրվելով Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառներին[1]: Սակայն Մ. Ասատրյանը Խոյ-Մարաղայի բարբառի համար բերում է ընդամենը երկու բառի օրինակ (փըշըրվանք, տըռվէրք)՝ *վանք* և *վէրք* հոգնակերտների համար[2], նշենք նաև, որ հիշյալ բարբառի գործածությունն ունեցող տարբեր համայնքներում Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով գրանցված մի շարք տետրերում (թիվ 70, 72, 145, 161, 270, 358) հիշյալ տիպի որևէ հոգնակերտի օրինակ չենք գտել: Ինչ վերաբերում է Բայազետի բարբառին, ապա մեր աշխատանքներից մեկում նշել ենք, որ անհամոզիչ է թվում Բայազետի բարբառում *վի* մասնիկով բաղադրյալ հոգնակիի արձանագրումը, և հավանական ենք համարել եղած դեպքերում եզակի սեռականից հոգնակի ուղղականի կազմությունը *ու>վ* անցումով (օրինակ՝ էշ-իշու+անք>իշվանք)[3]: Ի տարբերություն *վի*-ով կազմված հոգնակերտների՝ *ր, եր, ար+ք, անք, այք* տիպի բաղադրյալ հոգնակիները ավելի մեծ տարածում ունեն արևելյան բարբառներում: Սրանցում այս կարգի հոգնակիների տարածման ցուցիչը 34 միավոր է, իսկ արևմտյաններում՝ 18 միավոր, ընդ որում՝ երկրորդ դեպքում հատկանիշը հիմնականում հատուկ է Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբին և Վանի միջբարբառախմբին[4]: Այլ դեպքերում հոգնակերտները արևմտյան ու արևելյան բարբառախմբերում գրեթե հավասար տարածում ունեն. օրինակ, այդպիսիք են *նի* մասնիկը և դրանով բաղադրված հոգնակերտները: Արևմտյան բարբառախմբում այս հատկանիշի տարածվածության ցուցիչը 37,5 միավոր է, իսկ արևելյան բարբառախմբում՝ 33 միավոր[5]:

Եզրակացություններ

Բարբառային հայերենում գործածվում են լեզվի պատմական զարգացման նախորդ փուլերից (առավելաբար միջին հայերենից) եկող հոգնակերտ մասնիկներ, ինչպես նաև գրաբարում ու միջին հայերենում չվկայված կազմություններ: Բարբառից բարբառ հոգնակիի կազմությունը տարբերվում է հոգնակերտ մասնիկների քանակով, դրանց կազմության ու հնչյունական

---

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 95-99:

[2] Տե՛ս Մ. Ասատրյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Ե., 1962, էջ 74:

[3] Տե՛ս Վ. Կատվալյան, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016, էջ 271-275:

[4] Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 88-99:

[5] Տե՛ս նույն տեղում:

յուրահատկություններով, այլ իրողություններով: Բարբառային հոգնակերտները կազմությամբ պարզ են կամ բաղադրյալ, ընդ որում՝ վերջինները ավելի շատ են: Բաղադրյալ հոգնակերտներն առավելաբար երկբաղադրիչ են և ավելի հաճախ կազմվում են *ք, էր, վի, պի, ան, նի* մասնիկներով: Հայերենի բարբառային բոլոր միավորներն էլ ունեն բաղադրյալ հոգնակերտներ, ընդ որում՝ այդպիսիք դրսևորվում են տարբեր զուգորդումներով ու հնչյունական ձևավորումներով: Հոգնակերտները տարբերվում են իրենց տարածվածությամբ: Գրեթե բոլոր բարբառներն ունեն *եր, ներ* հոգնակերտներ, տարածված են նաև *ք, նի* մասնիկները: Ըստ հոգնակերտ մասնիկների գործածության՝ ընդհանրություններ և տարբերություններ կարող են դիտվել ոչ միայն առանձին բարբառների, այլև բարբառախմբերի միջև: Մասնավորապես, տարբերակվում են արևմտյան բարբառներին հատուկ հոգնակերտներ, արևելյաններին հատուկ հոգնակերտներ և երկու բարբառախմբերում գրեթե հավասար տարածում ունեցող մասնիկներ:

Համառոտագրություններ (բարբառախոս վայրեր)

Ագլ. - Ագուլիս
Ալշ. - Ալաշկերտ
Ախլց.- Ախալցխա
Ասլ. - Ասլանբեկ
Ար. - Արարատ
Արդ. - Արդվին
Բյզտ.- Բայազետ
Բուլ. - Բուլանըղ
Եվդ. - Եվդոկիա
Երզ. - Երզնկա
Զթ. - Զեյթուն
Լ. - Լոռի
Խ. - Խոյ
Խրբ. - Խարբերդ
Կր. - Կարին
Կրճ. – Կարճևան
Հդր. - Հադրութ
Համշ. - Համշեն
Հջ. - Հաջըն
Ղզխ. - Ղազախ
Ղրբ. - Ղարաբաղ
Մղր. - Մեղրի
Մշ. - Մուշ
Մրղ. - Մարաղա
Ն.Ջ. – Նոր Ջուղա
ՆՆխ. – Նոր Նախիջևան
Շ.Կ. – Շապին-Կարահիսար
Շտխ. - Շատախ
Պլ. - Պոլիս
Սուչ. - Սուչավա
Սս. - Սասուն
Սվդ.- Սվեդիա
Վն. - Վան
Տիգր. - Տիգրանակերտ
Քս.- Քեսաբ

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան Մ., Երկեր, Զ հատոր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, 847 էջ:

2. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Ե., 1975, 303 էջ:
3. Աղայան Է., Մեղրու բարբառը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1954, 408 էջ:
4. Աճառյան Հ., Քննութիւն Մարաղայի բարբառի, Ե., 1926, 456 էջ:
5. Աճառյան Հ., Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի, Ե., 1940, 401 էջ:
6. Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1947, 272 էջ:
7. Աճառյան Հ., Քննություն պոլսահայ բարբառի, ԵՊՀ հրատ, Ե., 1941, 234 էջ:
8. Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1952, 301 էջ:
9. Աճառյան Հ., Քննություն Առտիալի բարբառի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1953, 292 էջ:
10. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1957:
11. Ասատրյան Մ., Ուրմիայի /Խոյի/ բարբառը, ԵՊՀ հրատ., 1962, 256 էջ:
12. Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Երևանի համալս. հրատ., 1957, 543 էջ:
13. Կատվալյան Վ., Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., Ասողիկ, 2016, 534 էջ:
14. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, ԵՊՀ հրատ., 2002 , 412 էջ:
15. Կոստանդյան Դ., Երզնկայի բարբառը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979, 191 էջ:
16. Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, խմբ. Հ.Մուրադյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977, 141 էջ:
17. Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1978, 230 էջ:
18. Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953, 459 էջ:
19. Մադաթյան Ք., Ալաշկերտի խոսվածքը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, 251 էջ:
20. Մուրադյան Մ., Շատախի բարբառը, ԵՊՀ հրատ., Ե., 1962, 227 էջ:
21. Պողոսյան Ա., Հադրութի բարբառը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1965, 371 էջ:
22. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1972, 347 էջ:

PLURAL PARTICLES IN ARMENIAN DIALECTOLOGY

KATVALYAN VIKTOR
Doctor in Philology, Associate Professor
The head of Language Institute after Hr. Acharyan, NAS RA
e-mail: viktorkatvalyan@mail.ru

The formation of the plural noun in the dialects of the Armenian language has not received a common interpretation in dialectology. The category of number has various manifestations in dialects, a comprehensive observation of which is important not only for dialectology, but also for the study of the Armenian language in general. The aim of the work is to study the particles forming the plural in the dialectal Armenian language, to identify the peculiarities of their composition and distribution. The phenomenon was observed in about forty dialects of the Armenian language; the data were taken from both monographs and handwritten materials collected by dialectologists. Plural dialectal particles are simple or complex in composition. Complex particles are mostly two-component, more often they consist of units ք, եր, վի, տի, ան, նի: All dialectal units of the Armenian language have complex plural particles, moreover, they are expressed in various combinations and different phonetic features. In almost all dialects the particles եր, ներ, particles ք, նի are also common. By the use of plural particles, similarities and differences can be observed not only between individual dialects, but also between groups of dialects. In particular, there are particles characteristic of western dialects, particles characteristic of eastern dialects, and particles with almost equal distribution in both dialect groups.

Key words: *plural, particle, simple, compound, dialect, Armenian, Old Armenian, Middle Armenian.*

ЧАСТИЦЫ, ОБРАЗУЮЩИЕ МНОЖЕСТВЕННОЕ ЧИСЛО В АРМЯНСКОЙ ДИАЛЕКТОЛОГИИ

КАТВАЛЯН ВИКТОР
Доктор филологических наук, доцент,
Директор Института языка им. Р.Ачаряна НАН РА
Преподаватель ГГУ
электронная почта: viktorkatvalyan@mail.ru

Образование множественного числа существительного в диалектах армянского языка не получило общего толкования в диалектологии. Категория числа имеет различные проявления в диалектах, всестороннее наблюдение которых важно не только для диалектологии, но и для изучения армянского языка в целом. Целью работы является изучение частиц, образующих множественное число в диалектном армянском языке, выявление особенностей их состава и распределения. Явление наблюдалось примерно в сорока диалектах армянского языка, данные взяты как из монографий, так и из рукописных материалов, собранных диалектологами. Диалектные частицы множественного числа бывают простыми или сложными по составу. Сложные частицы в основном двухкомпонентные, чаще они состоят из единиц ք, եր, վի, տի, ան, նի: Все диалектные единицы армянского языка имеют сложные частицы множественного числа, причем, они выражаются в различных сочетаниях и различными фонетическими особенностями. Практически во всех диалектах есть частицы եր, ներ, частицы ք, նի тоже распространены. По употреблению частиц множественного числа, сходства и различия можно наблюдать не только между отдельными диалектами, но и между группами диалектов. В частности, есть частицы, характерные для западных диалектов, частицы, характерные для восточных диалектов, и частицы с почти равным распространением в обеих диалектных группах.

Ключевые слова: *множественное число, частица, простой, составной, диалект, армянский, древнеармянский, среднеармянский.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 20.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.09.2021թ.: